

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՅՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՅՎԱԶՈՎԱՔԻ. (*)

Տաղանդ մըսաց ձիր Ասուծոյ, ոսկի արծաթ ձիր ե ձեռաց մարդկային:

ԿՆԵՏԻԶ.

Գրչաւ մի գրէր ձիւնի,
Վընաւ մի նուագէր սիրուն,
Խուն ե այդ եւ յոյժ հեշին.
Այլ ձեռմակ ի պասսառին
Չողջ աշխարհս հսնէ քոցագոյն:

ՔՈՒՔՈՂՆԻՔ.

Ամբոխ՝ պառաւ շաղակրատ, մոռացկոտ եւ ծանրաշուր:

(ի գերմանական) ՄԻՆԱՄԵՎ.

Տաղոյ՛ գԱսուծոյսն Ասուծոյ եւ գԿայսերն Կայսեր:

ԸՆԿԱԼ ըզբան ԸԵՐԲՈՂԻ յանշահասէր քերթողէս,
Որ ի հետոց հանճարոյդ խոտորեցաւ երբէք ոչ.
Նըւիրական վառի հուր ի քո վըրձինըդ ճարտար,
Դու հրովն այնուիկ յԱստուծոյ ոչ վայրապար օժտեցար:

*

Տիեզերաց ի փայլման գոս ապաքէն անդրանիկ.
Պանծացիր ճվ պարմանիդ դու սիրեցեալ յԱրարչէն,
Դիմեա՛ յառաջ ընդ շաւիղ ընդ որ զընասդ անխոտոր,
Եւ ընկալցիս ի ճակատ պըսակ փառաց աստանօր:

*

Քեւ Ռուսիա մայր արդէն պարծի փառօք խընդագին,
Ըզքեզ նորին ՀԱՅՐԸՆ մեծ ընդ պատուականըս զըրէ.
Յերկարեսցի թել կենացդ ի պատիւ քոց հայրենեաց.
Քո կնիք՝ սուսեր եւ վահան՝ սէրն է քոյոց համազգեաց:

*

*) Այվազովսքի Յովհաննէս Ադան գնաց Թեոդոսիայէն Փերրպուրկ նոյեմբերի 1-ին՝ հետը տանելով իւր նկարած մեկ-
քանի պատկերները, որոց մէջ երկու մեծերը, Համաշխարհական ջրհեղեղ եւ Արարչագործութիւն՝ մօտերս գնէր եւ
Վենետիկ. Ինքնակալը, եւ Յովհաննէս Ադային շնորհէր եւ Վլատիմիրի ասպետական կարգին Գ աստիճանի խաչը:

Դու քեւ ըզքոյդ ազգատոհմ ճոխացուցեր հրաշապէս,
 ճոխացուցեր զաշխարհ մեր ձեռակերտօքըդ սիրուն.
 Քանզի եւ ոչ զերկրաւոր ոյժ եւ կորով դու առեր.
 Ըզլոյս որսաս դու յերկնից եւ զգերարփինըն զեթեր:

*

Հասու եղեր դու կենաց եւ որ ի նմա չըքնաղից,
 եւ սըրբազան հրրատիւ զարդարեցեր ըզնոսին.
 Զբնութիւնս ողջոյն գրաւեցեր՝ է զի զցերեկ է զի զցայգ,
 է զի խաղաղ եւ հեզիկ, է զի խռովեալ բովանդակ:

*

Աշխարհաստեղծ Արարչին գործոց եղեր խելամուտ,
 եւ ըզցասումըն նորին հաներ ճըշգրիտ ի նրկար.
 Հաներ ի լոյս յանկարծուստ ըզմոռացեալ վէպս ահեղ,
 Թէ զմեղաւորսըն կորոյս տեղատարափ ջըրհեղեղ:

*

Դու զԱստուծայ ձրգեցեր առ մեզ զալիս եւ ըզսիւզ,
 Գըծագրեցեր ըզշրպարս չըքնաղագեղ Տաւրիոյ,
 եւ զթըխատիպըն կոհակ ըզմըրըրկեալ փըրփրադէզ
 Բարձրացուցեր ի կըտաւ հըզօր բազկաւ քաջապէս:

*

Ըզքեզ առ ինքըն կոչէ մեր պերճափառըն Կովկաս,
 եւ օրորոց Ռուսիոյ՝ ճոխ զանձարան մեր Ալթայ.
 Ըզքեզ Ամուր ճոխաճեմ եւ անապատ Խըրդըզեան.
 Անդ զուգատիպ քո ձեռին զըտցես անծայր տեսարան

*

Մինչեւ արձանք կանգնեցին քո դաստակիդ յիշատակ,
 Քաղեա զառատ արգասիս՝ ոգւոյդ քոյին բերկրաւէտ.
 Մի՛ զըրուատեաց ղըներ միտ եւ մի՛ անմիտ բասրանաց,
 Ակընկալչիր յապագայս առնուլ զերկոց քոց ըզվարձ:

*

Ի ցանկալին սարաւանդ զոր դուն այնքան զըզուեցեր,
 Անապական կանգնեցի երբեմըն քոյդ կերպարան.
 Սերմըն փոքրիկ զոր հանձար քո սերմանեաց անղանօր,
 Զարդարեցէ զհայրենիդ բեղնովք հարիւր բիւրաւոր:

ՄԻՔԱՅԷԼ ՊԼԱՐԱՄՊԷՐԿ.

1 Նոյեմբերի 1864.

Ի Թեոդոսիա.